


Գիտություն

ՀՈՒՆՎԱՐ

№2 (166)

2004թ.

Գիտությունների ազգային ակադեմիայի բերք • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից



Կարմիր մուտրակը բացում է գաղտնիքները

Մարս ուղարկած եվրոպական մոդուլի հեղինակները ջանք էին թափում պարզելու, թե ինչու մուտրակի մակերևույթին իջած սարքը կյանքի ազդանշաններ չի տալիս: Եվ ահա, վերջնականապես, նրանք համոզվեցին, որ մարսագնացը կործանվել է: Իսկ նույն ժամանակ Մարսին հյուրընկալված ամերիկյան սարքը, հաղթահարելով տարածքի արգելքները, շարունակում է կյանքի հետքեր, չուր փնտրել Մարսի վրա և հիմնական պատկերներ հաղորդել երկիր:

Շուրջ 250 լուսանկարների շնորհիվ, գիտնականներին հաջողվեց ստեղծել Մարսի այդ տեղանքի համայնապատկերը: Սակայն մի քանի օր չէր հաջողվում մարսագնացը իջեցնել գետնի վրա և այն շարունակում էր ակոսել մուտրակը օդով լցված բարձիկների վրա: Այժմ հարցը լուծվել է, և մարսագնացը անիվներ

րի վրա է: Ավելին, նրան օգնության է հասել «Օպորտունիտի» գործընկերը:

Մեր թերթի նախորդ համարում մենք պատմել ենք դեպի Յուպիտեր ուղարկված ամերիկյան սարքի մասին: Ինչ իմանալիք մենք, որ 21-րդ դարում տիեզերական անակնկալներն ավելի արագ են տեղի ունենում, այնքան արագ, որ մեր թերթը (մենք օրաթերթ չենք) չի հասցնում իրադարձություններին օպերատիվ հետևել: Եվ քանի որ օպերատիվությամբ աչքի չենք ընկնում (իսկ մյուս թերթերը, առհասարակ, չեն անդրադարձել), որոշեցինք գոնե աչքի ընկնել գիտական մեկնաբանությամբ: Նոր տարվա տիեզերական շաբաթները մեկնաբանում է Բյուրականի աստղադիտարանի աշխատակից, աստղագետ ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ:

Մարսը՝ նորից ուշադրության կենտրոնում

Համաշխարհային հասարակության հիշողության մեջ դեռևս թարմ է Մարս մոլորակի դիմակայության հետ կապված իրարանցումը: Դրը տեղի ունեցավ անցյալ տարվա օգոստոսի վերջին: Իսկ այս տարին սկսվեց Մարսի հետազոտությունների մի նոր փուլով: Միջին հաղողավիհանայան ժամանակով հունվարի 3-ին (հայկական ժամանակով՝ արդեն հունվարի 4-ին) Մարսի մակերևույթին, Գուսկի խառնարանում վայրէջք կատարեց ամերիկյան «Spirit» (Ոգի) ինքնաշխատ կայանը, որն անմիջապես սկսեց երկիր ուղարկել վայրէջքի տեղանքի անմիջադեպ բարձր որակի լուսանկարներ:

Ընդհանրապես Մարսի նկատմամբ հետաքրքրությունը միշտ էլ շատ մեծ է եղել: Դա պայմանավորված է նրանով, որ Մարսը որոշ չափով հիշեցնում է երկիրը: Գիշտ է, չափերով Մարսն էապես գիշում է երկրին: Նրա շառավիղն ընդամենը 3394 կմ է, իսկ զանգվածը կազմում է երկրի զանգվածի մոտավորապես 0,11 մասը: Սակայն սեփական առանցքի շուրջը պտտվելու պարբերությամբ (24,6 ժամ), ինչպես նաև այդ առանցքի թեքության չափով (24 աստիճան), այն զարմանալի մոտ է երկրին: Առանցքի թեքության պատճառով Մարսի վրա նույնպես տեղի է ունենում եղանակների հերթափոխություն, սակայն տարին մոտավորապես 1,9 անգամ ավելի երկար է, քանի որ մոլորակն Արեգակից 1,5 անգամ ավելի հեռու է գտնվում, քան երկիրը:

Մարսի մթնոլորտն, ի տարբերություն երկրի և հատկապես Վեներայի, չափազանց նոսր է: Մթնոլորտային ճնշումը մոլորակի մակերևույթի վրա կազմում է երկրայինի ընդամենը 1/150 մասը: Մթնոլորտը հիմնականում (95,3 %) կազմված է ածխաթթու գազից, որին խառնված են փոքր քանակությամբ ազոտ (2,7 %), արգոն (1,6 %), թթվածին (0,13 %): Ձրի գոլորշիները կազմում են մոտ 0,03 տոկոս:

Այս, և ֆիզիկական որոշ այլ մեծություններ Մարսի մասին հայտնի էին դեռևս երկրից կատարվող հետազոտությունների շնորհիվ: Սակայն Մարսի վերաբերյալ տեղեկությունները շեշտափորեն սկսեցին աճել, երբ դեպի այդ մոլորակ արձակվեցին առաջին խորիր-

դային, ապա նաև ամերիկյան հետազոտական կայանները: Մինչև օրս դրանց քանակն անցել է երեք տասնյակից, ըստ որում, վերջին տասնամյակում հիմնական դերը կատարում են ամերիկյան կայանները:

Վերոհիշյալ կայանի նկատմամբ հետաքրքրությունը չափազանց մեծ է: Դա մի քանի պատճառներ ունի: Նախ՝ վերջին տարիների ընթացքում Մարսի վերաբերյալ բավականին նոր ինֆորմացիա էր հաղորդել ամերիկյան «Odyssey» («Ոդիսևս») կայանը, որի թերևս կարևորագույն հայտնագործություններից մեկը սառած ջրի մեծ քանակն էր Կարմիր մոլորակում: Մակերևույթից ոչ մեծ խորության (0,5-1 մ) վրա հայտնաբերված սառույցի մեծ պաշարները հիմք են տվել վարկածներ առաջ քաշելու այն մասին, որ ավելի մեծ խորություններում կարող են լինել նաև հեղուկ ջրի ամբարներ: Եվ, իհարկե, անմիջապես նորից հառնեց մարդկությանը համոզիտ չտվող այն հարցը, թե արդյո՞ք կյանք կա Մարսի վրա:

Այս գիտափորձի նկատմամբ հետաքրքրությունը բարձր էր նաև կյանքի նշույներ գտնելու հնարավորության առումով: Այդ հարցը մարդկությանը հանգիստ չէր տալիս շատ վաղուցվանից, սակայն նոր թափով բորբոքվեց 19-րդ դարի վերջերից, երբ առաջին անգամ իտալացի աստղագետ Սկիապարելին հաղորդում կատարեց Մարսի մակերևույթի վրա իր հայտնաբերած ուղիղ գծերի մասին: Այդ մուգ գույնի գծերը նա մեկնաբանեց իբրև բանական էակների կառուցած ջրանցքներ: Հետագայում կասկածի տակ դրվեց նույնիսկ գծերի գոյությունը: Իսկ կյանքի առկայության մասին վարկածը դրանից հետո բազմիցս հերքվել, ապա կրկին վերակենդանացել է, այսպես էլ վերջնական պատասխան չգտնելով: Անցյալ դարի 70-ական թվականներին կյանքի որոնման նպատակով իրականացված «Viking» գիտափորձերը նույնպես վերջնական պատասխան չտվեցին այդ հարցին: Գիշտ է, կյանքի նշույլ չհայտնաբերվեց, բայց նաև վերջնականապես չբացառվեց պարզագույն կյանքի գոյությունը միաբջջի բակտերիաների տեսքով:

Հաշվի առնելով Մարսի ֆիզիկական պայմանները, գիտնականները հաճախ այդ մոլորակը համեմատում են երկրի ապագայի հետ: Կարծիքներ կան, որ վերջիվերջո մեր մոլորակում նույնպես նման ֆիզիկական պայմաններ են ստեղծվելու, ինչը կործանելու է բարձրակարգ կյանքը: Բայց կյանքի ավելի ցածրակարգ ձևերը կարող են հարմարվել այդ խստացած պայմաններին և շարունակել իրենց գոյությունը: Ահա, հենց այդ պատճառով են փնտրվում այդ միաբջջի օրգանիզմները, որոնք կարող են վկայել նաև Մարսի վրա նախկինում գոյություն ունեցած հարուստ կենդանական ու բուսական աշխարհների մասին: Հենց այդ տեսակետից, կյանքի պարզագույն ձևերի հայտնաբերումն անգամ կարող էր հանդիսանալ հայրուրանյակի խոշորագույն սեմսացիաներից մեկը: Սակայն առայժմ այդ հայտնագործությունն ու սեմսացիան տեղի չեն ունեցել:

Եվ վերջապես, այս կայանի վայրէջքին անհամբերությամբ էին սպասում նաև այն պատճառով, որ դրանից ընդամենը մի քանի օր առաջ անհաջողության էր մատնվել եվրոպական Տիեզերական գործակալության ուղարկված նավի վայրէջքային մոդուլը՝ «Beagle-2» (Ռոսաշուն-2) կայանը, որը մինչև օրս էլ կենդանության որևէ նշույլ չի ցուցադրում: Ընդհանրապես, պետք է նշել, որ ըստ վիճակագրության, մինչև այժմ Մարս ուղարկված ավելի քան 30 ինքնաշխատ կայան-

ների կեսից ավելին տեխնիկական այս կամ այն պատճառներով անհետ կորել է հենց սկզբից:

«Spirit» կայանն արդեն բերվել է աշխատանքային վիճակի, այսինքն՝ տեսախցիկները բարձրացվել են մոտավորապես 1,5 մ բարձրության, և մարսագնացն սկսել է իր վեց անիվներով տեղաշարժվել մակերևույթին կարմիր հողի վրա: Դատկերավոր ասած, այն ներկայումս Մարսի մակերևույթը «տեսնում» է միջինից մի փոքր ավելի ցածրահասակ, դանդաղ զբոսանքի դուրս եկած մարդու նման: Լուսանկարելն ու ստացված պատկերները երկիր ուղարկելը «Spirit»-ի պարզագույն խնդիրն է: Այն նախատեսված է նաև հողի մոլուշներ վերցնելու և դրանց քիմիական բաղադրությունը բացահայտելու համար: Նմանատիպ գիտափորձեր էին կատարել գրեթե քսան տարի առաջ նաև ամերիկյան «Viking» կայանները:

Հունվարի 24-ին նախատեսվում է այս կայանի կրկնակի վայրէջքը Մարսի վրա: Այն կոչվել է «Opportunity» (Հնարավորություն): Սովորաբար նման կայանները ունենում են իրենց կրկնակը, որպեսզի մեկի անհաջողության դեպքում, մյուսը հնարավորություն ունենա իրականացնել նախատեսված գիտական ծրագիրը: Այս դեպքում առաջին կայանը հաջողությամբ սկսել է գործել, և եթե երկրորդը նույնպես բարեհաջող վայրէջք կատարի, ապա դրանք նա-



Մարսյան բնապատկեր

Մարսը՝ Լորից ուշադրության կենտրոնում

խագծողները կրկնակի քանակությամբ գիտական ինֆորմացիա կստանան Մարսից:

«Spirit»-ի նախագծողներն այն նախատեսել են մոտավորապես 600-700 մետր տեղաշարժվելու համար: Թե որքան կաշխատի այն, ցույց կտա ժամանակը: Միշտ էլ հնարավոր են չկանխատեսված բարդություններ, որոնք էլ երբեմն ճակատագրական են դառնում գիտափորձի համար: Վայրէջքից հետո, օրինակ, Մարսի մակերևույթի փոշու փոքր քանակը, որ նստել է արևային մարտկոցների վրա, մի քիչ նվազեցրել է լուսատարներին հասնող լույսի և, հետևաբար, արտադրվող էներգիայի քանակը: Բայց, բարեբախտաբար, այն դեռևս գտնվում է նախատեսվածի սահմաններում և չի սպառնում կայանի կանոնավոր աշխատանքին: Ինչպես երկրի վրա, այնպես էլ Մարսի, բացի պարզ ու արևոտ օրերից լինում են նաև մշուշոտ, հողմով բարձրացած փոշով հագեցած օրեր, որոնք մուսկայն խոչընդոտներ են ստեղծում գիտափորձի համար: Սակայն այդ ամենը հայտնի էր նախագծողներին և, ամշուշտ, նրանք մանրամասնորեն հաշվի են առել Մարսի մակերևույթի ֆիզիկական պայմանները: Ուստի մենք կարող ենք հույս ունենալ, որ այս գիտափորձի արդյունքում մարդկությունը բավականաչափ կհարստանա՝ եթե մուկնիսկ ոչ Մարսում կյանքի գոյության մասին, ապա գոնե նրա ֆիզիկական վիճակի ու քիմիական բաղադրության վերաբերյալ մոր տեղեկություններով:

Հայկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Աստղագետ

Մեր հարևանները

Կալիստոն Հալլեի շուրջը պտտվող արբանյակներից է և գտնվում է 2410 կիլոմետր հեռավորության վրա Կալիստոնը իրենից ներկայացնում է առցես հսկա բեկոր, որի մակերևույթի վրա բարձրանում են հսկա լեռնազանգվածները: Հալլի առնելով, որ Կալիստոյի շուրջը առկա է թույլ մթնոլորտ, պետք է ենթադրել, որ հնարավոր է կյանքի ինչ-որ ձևի գոյությունը:

Գանիմեդ արբանյակը, որը գտնվում է 2638 կմ հեռավորության վրա, տեֆտոնական ակտիվ շրջան է ապրում: Նրա մագնիսական ակտիվ վիճակը երկրաշարժերի ու կեղևի ձևավորման վիճակ է ստեղծել: Կնշանակի մեր հեռավոր հարևանները ձևավորման ակտիվ շրջան են ապրում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Քննարկումներ, առաջարկներ, վերլուծություններ

Ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը պարզևատրվեց ԳԱՄԸ-ի մեդալով

Գիտությունների ակադեմիաների միջազգային ընկերակցությունը (ԳԱՄԸ) որոշում է ընդունել Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանին «Գիտության զարգացման աջակցելու համար» արժապետ մեդալով պարգևատրելու մասին: Որոշումն ընդունվել է Կիևում կայացած ԳԱՄԸ հանդիսավոր նիստում, որը նվիրված էր Ընկերակցության ստեղծման 10-ամյակին: Ֆադեյ Սարգսյանը նիստում ներկայացրել է հայկական գիտության նվաճումները և հայկական գիտության խնդիրները, ինչպես նաև միջազգային համագործակցության խորացման հնարավորությունները:

Միջազգային օլիմպիադաներում հաղթած դպրոցականները ՀՀ ԳԱԱ-ում

Ողջունելով Հայաստանի դպրոցականներին՝ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Սարգսյանը որակեց սույն հավաքը որպես՝ ամենագեղեցիկ միջոցառում: Այս հաղթանակները ցույց են տալիս մեր աճող սերնդի ձգտումը դեպի գիտությունը, ինչը շատ ուրախալի է, քանի որ հանրապետության ապագան միանշանակ կապված է գիտության հետ:

Այս տարի միջազգային օլիմպիադաների հաղթողները 12-ն էին. 3 հոգի մաթեմատիկայից (Տոկիո), 1-ը՝ ֆիզիկայից (Տայվան), 2-ը՝ ինֆորմատիկայից (Չիկագո), 3-ը՝ քիմիայից (Մոսկվա) և 3-ը՝ աստղագիտությունից (Մոսկվա): Հատկանշական է, որ ինֆորմատիկայի և աստղագիտության օլիմպիադաներում հաղթողները բոլորն էլ Երևանի «Քվանտ» վարժարանից են:

Դպրոցականներին հանձնվեցին մեդալներ, իսկ նրանց ուսուցիչներին՝ ԳԱԱ պրեզիդենտի շնորհակալագրեր:

Դպրոցականների օլիմպիական շարժման անունից շնորհակալագրեր հանձնվեցին Ֆ. Սարգսյանին, Էդ. Ղազարյանին, Ա. Շահինյանին և Է. Պարսամյանին:

Միջոցառմանը ներկա էին նաև կրթության և գիտության նախարար Ս. Երիցյանը և փոխնախարար Ա. Թովուկյանը: Ս. Երիցյանը հայտնեց, որ հաղթող դպրոցականներին սպասում են նախարարությունում և խնդրեց երեխաներին՝ այդ օրը արտահայտել իրենց տեսակետները՝ հատուկ դպրոցների և վարժարանների վերաբերյալ:

Մ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կենսատեխնոլոգիաներ, մոր հեռանկարներ

Հայաստանը գենետիկորեն մոդիֆիկացված արտադրանքի ստացման կենսատեխնոլոգիաների պոտենցիալ արտահանող է: Այս մասին հայտարարեց Երևանի Պետական համալսարանի բույսերի կենսատեխնոլոգիայի և միկրոկենսաբանության ամբիոնի վարիչ Յուրի Պոպովը՝ դեկտեմբերի 23-ին կենսաանվտանգության ազգային ծրագրի շրջանակում կայացած խորհրդակցության ժամանակ: Ծրագրին աջակցում են UNEP-ը և Գլոբալ էկոլոգիական ֆոնդը (GEF):

Ըստ Պոպովի, գենետիկորեն փոփոխված օրգանիզմների ստացման ուսումնասիրությունները, որ իրականացնում է ԵՊՀ-ն, դուրս չեն գալիս գիտական փորձարկումների շրջանակից, և «այդ տեսանկյունից խոսք անգամ չի կարող

լինել կենսաանվտանգության խնդրի վերաբերյալ»: Յուրի Պոպովը համոզմունք հայտնեց, որ Հիմնաստանի Ժողովրդական Հանրապետության հետ համատեղ ծրագրում աշխատող Կենսատեխնոլոգիաների ինստիտուտում կատարվող ուսումնասիրությունները մուկնիսկ որոշակի ստուգում են անցնում և սպառնալիք չեն ներկայացնում:

Հիմնական կողմի հետ պայմանավորվածությամբ համաձայն, Կենսատեխնոլոգիայի ինստիտուտը մշակում է միկրոօրգանիզմների ստացման սխեմաներ, որոնք ընդունակ են արտադրել ամինաթթուներ, որոնց մեծ պահանջարկ կա հատկապես գյուղատնտեսության մեջ: Ամինաթթուներից մեկը՝ արգինինը, արտադրվում է աղիքային ծողիկ միկրոօրգանիզմի կողմից, որին ընդելուզված է օտարածին գեն:

Արդյունքում արգինինի սինթեզը բազմապատկի արագանում է:

Հայաստանում առայժմ չկա ամինաթթուների արդյունաբերական սինթեզ, իսկ մշակվող սխեմաները տրամադրում է չինական կողմը: Պոպովի կարծիքով, նման բնույթի կենսատեխնոլոգիաները կարիք ունեն վերահսկողության կառավարության կողմից: Նա գտնում է, որ անհրաժեշտ է փորձաքննական խորհուրդ, որը կառուցվի գնահատական տալ ռիսկերին և եզրակացություն կայացնել:

Ինչ վերաբերում է արգինինի հետևանքներին, ապա, Կենսատեխնոլոգիայի ինստիտուտի մասնագետների գնահատմամբ, աղիքային ծողիկի այդ տեսակը վտանգ չի ներկայացնում, քանի որ միկրոօրգանիզմը արագ ինքնաուչնացման հատկություն ունի: Ի. ԶԱՄԽՅԱՆ

Ի նպաստ գրադարանային գործի զարգացման

Բաց հասարակության ինստիտուտի ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանցի ստեղծում» նախագիծը ներկայացվեց Հայաստանի գրադարանների ներկայացուցիչներին: Նախագծի նպատակն է աջակցել հայաստանյան գրադարաններին՝ դառնալու գիտելիքների և տեխնոլոգիաների փոխանցման առաջատար կենտրոններ, համահավաք քարտարանի օգնությամբ հնարավոր դարձնել ընթերցողների մուտքը տեղեկատվական շտեմարաններ, նպաստել հեռահաղորդակցության, գրադարանագիտության և ինֆորմատիկայի բնագավառներում առկա միջազգային չափորոշիչների տեղայնացմանը:

Ծրագրին մասնակցում են Ազգային, ԳԱԱ, ԵՊՀ, Հանրապետական գիտատեխնիկական, Գիտաբժշկական գրադարանները և Ազգային գրապալատը:

Ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանի խոսքով, այս աշխատանքների հաջողությունից մեծապես կախված է հայկական գրադարանային ոլորտի ինտեգրումը համաշխարհային գրադարանային գործընթացներին:

Բաց հասարակության ինստիտուտը 2000-2005 թթ. համար նախագծին հատկացրել է 488 հազար ԱՄՆ դոլար, իսկ «Ինֆորմացիոն հաղորդակցություն» (Շվեյցարիա) տրամադրել է 65 հազար ԱՄՆ դոլար՝ լուսամանրաթելային կապուղու անցկացման համար:



Հայ գիտնականների ինտեգրման անհրաժեշտությունը

Գիտությունն այսօր չի կարող զարգանալ մի երկրի շրջանակներում. ցանկացած լուրջ գիտական խնդիր արդյունավետ լուծում կարող է ստանալ միայն այն դեպքում, երբ դրա լուծմանը մասնակցում է միջազգային գիտական ամբողջ համայնքը: Այս տեսակետը հայտնեց «Բրոնկոսկոպ» հասարակական կազմակերպության նախագահ Աննա Բոլաշյանը՝ «Ճանապարհ դեպի միջազգային գիտական համագործակցություն» թեմայով սեմինարում, որը տեղի ունեցավ վերջերս: Ըստ նրա, ցանկացած երկրի գիտության զարգացումը զգալի կերպով պայմանավորված է նրանով, թե տվյալ երկիրը որքանով է ինտեգրված միջազգային գիտական համայնքում:

«Ճանապարհ դեպի միջազգային գիտական համագործակցություն» սեմինարին մասնակցեցին մի շարք գիտահետազոտական և գիտակրթական կենտրոններից մրցութային կարգով նախապես ընտրված ավելի քան 75 երիտասարդ գիտնականներ: Միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներն իրենց դասախոսություններում ու ելույթներում հիմնական շեշտը դրեցին միջազգային այն ծրագրերի վրա, որոնցում Հայաստանի գիտնականների ներգրավումը կստեղծի բարենպաստ պայմաններ երկրում գիտության զարգացման համար: Նրանք երիտասարդ գիտնականներին ներկայացրեցին իրենց ձեռք բերած փորձն ու գիտելիքները, որոնք անհրաժեշտ են միջազգային գիտական համագործակցության մեջ ներգրավվելու համար:

Սեմինարը նպատակ ուներ նաև Հայաստանի հասարակության ուշադրությունը սևեռել գիտության զարգացման գործում կին-գիտնականների ունեցած դերի վրա:

Դեղամիջոցների շնորհանդես

Հերթական անգամ ՀՀ ԳԱԱ Բժշկական գենետիկայի կենտրոնը մարդաշատ էր: Հերթական անգամ այստեղ շնորհանդես է: Այս անգամ Բժշկական գենետիկայի հյուրընկալ կենտրոնում գերմանական Մերց (MERZ) դեղագործական ընկերությունն էր հյուրընկալվել: Վերջիններս հայ բժիշկներին ներկայացրեցին իրենց արտադրած մի քանի դեղամիջոցներ, որոնք շուտով կգործնվեն ՀՀ առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների գործակալությունում»:

Ընկերության հայաստանյան ներկայացուցիչ արոֆեսոր Սալադյանը ներկայացնելով Մերց ֆիրմայի գործունեությունը՝ նշեց, որ իրենց դեղամիջոցները գրանցված և լայնորեն կիրառվում են աշխարհի բազմաթիվ երկրներում՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Կանադա, Բրազիլիա, Ռուսաստան և այլն: Նա նաև պատմեց, որ Ակադեմիոլ (МЕМАНТИОЛ от Мерц) դեղամիջոցի ստեղծման և արտադրության համար գերմանական բոլոր դեղարտադրող ընկերություններից հենց Մերց ընկերությունն է արժանացել Գերմանիայի էկոնոմիկայի նախարարության մրցանակին: Մրցանակը շնորհվել է տարվա լավագույն արտադրանքի համար: Այս մրցանակը 19 տարվա ընթացքում շնորհվել է ընդամենը 19 անգամ 19-ը ընկերությունների:

Պրոֆ. Սալադյանի խոսքով՝ վերոհիշյալ դեղամիջոցը ամբողջությամբ ստեղծվել է իրենց ընկերությունում: Այն կիրառվում է նախևառաջ ալցիտներ հիվանդության, գլխուղեղի վնասվածքների ժամանակ, գլխուղեղի կաթվածի դեպքում բոլոր այն հիվանդությունների ժամանակ, որոնք կապվում են մարդու շարժողական ապարատի խանգարումների հետ: Եվ այս ուղղությամբ Մերց ընկերության բոլոր դեղամիջոցները, Սալադյանի հավաստմամբ, համարվում են առաջատար ամբողջ աշխարհում:

Մինչ այսօր Մերց ընկերությունը Հայաստանում գրանցել էր ընդամենը 2 դեղամիջոց, իսկ ընդհանուր առմամբ, Մերց ընկերության հայաստանյան ներկայացուցիչների խոսքերով, նախատեսվում է մեր երկրում գրանցել մինչև 10-ը դեղամիջոց: Ն. ԿԱՐԱՆՅԱՆ

Վերծինն ՍՎԱԶԼՅԱՆ

Հայոց ցեղասպանությունը և պատմական հիշողությունը

Սույն ուսումնասիրությունն ընդգրկում է Հայոց ցեղասպանությունից վերապրած սերնդից անմիջականորեն զրի առնված ժողովրդական բանավոր վկայություններ, երգեր, որոնք շուրջ 50 տարիների ընթացքում մեծ համբերությամբ ու նվիրվածությամբ զրի է առել բանասիրական գիտությունների դոկտոր Վերծինն Սվազլյանը:

Աշխատությունն ունի հույժ պատմական, անգամ բաղադրական արժեք ու նշանակություն, մասնավորապես այնտեղ գետնից վեր հանված Հայոց ցեղասպանության սահմաններում տեսարանները պատկերող բազմաթիվ հուշակատմաններով և դերգրյալ տառապանքներն ու ողբերգական մտորումներն արձանագրող ժողովրդական հայերեն ու

թուրքալեզու երգերով:

Կատարված է տքնաջան ու շնորհակալ մեծ աշխատանք Հայոց ցեղասպանությունից վերապրողների (որոնք արդեն չկան) խամրող հիշողությունից և հավերժ մոռացության վտանգից հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ողբերգական ու հերոսական պատմության անգուցական հուշերն ու երգերը փրկելու և անմահացնելու ուղղությամբ:

Այդ նյութերն իսկապես պատմական կարևորագույն վավերագրեր են հայոց մեծագույն ողբերգության ցնցող պատկերները ժողովրդական կենդանի լեզվով վերարտադրելու առումով:

Սույն ուսումնասիրության մեջ հեղինակն իր գրառած հարուստ ու բազմազան նյութերը հմտորեն զուգակցել է


պատմական ստույգ փաստերի հետ և ժողովրդական այդ նյութերը դարձել են պատմական ճշմարտությունները հավաստող, հիմնավորող, մանրամասնող ժողովրդական յուրօրինակ վավերագրեր: Հարկ է նշել, որ հեղինակն առաջինն է գիտական շրջանառության մեջ դրել Հայոց ցեղասպանության շուրջ հյուսված հիշյալ նյութերը՝ հատկապես ժողովրդական հուշերն ու թուրքալեզու երգերը:

Աշխատությունը համարված է վերապրողների լուսանկարներով և ամենակարևորը՝ թուրքալեզու երգերին կցված գրառողի կատարած թարգմանություններով, որոնք մեծապես դուրացնում են նյութերի ընկալումը:

Ականատեսների այդ հուշերը և, մանավանդ թուրքալեզու երգերն, ունեն պատմական վավերագրերի արժեք ոչ միայն հայ ժողովրդի ողբերգական այդ շրջանի պատմությունը ճիշտ հասկանալու և ըմբռնելու իմաստով, այլև Հայ Դատի պաշտպանությունն առավել հիմնավորելու և հատկապես թուրք ու թուրքամետ պատմաբաններին ժողովրդական հուշերով և հենց թուրքալեզու եր-

գերով ու նրանցում հնչող մեղադրանքներով հակահարված տալու առումով:

Սարգիս ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի բոլորակից անդամ



Գրիգոր ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

30 և բազում օրեր վարպետի հետ

պարադոքսների վրա է հիմնված: Ահա նույն ժամանակ, 1948 թվի հոկտեմբերին, Սոֆիյի նշանավոր «Кавказская ривьера» («Կովկասյան ծովեզր») առողջարանում, որ ստեղծված էր կուսակցական ու մտավորական վերնախավի համար, հանգստանում են Վարպետը իր կնոջ՝ տիկին Սոֆյայի հետ, զորացրված սպա, «Հոկտեմբերիկ» ամսագրի խմբագիր, արձակագիր Գրիգոր Մարտիրոսյանը և Հայրենական պատերազմի երիտասարդ մասնակից, Երևանի կոմերիտի մարզային քաղկոմի քարտուղար, մահ պետհամալսարանի ուսանող Գրիգոր Մար-

տիրոսյանը:

Եվ այսպես, մի պատահական զուգահեռումով Սոֆիյում՝ «Կովկասյան ռիվերայում», հոկտեմբեր ամսին գտնվում էին փաստորեն ուսանողը, «Հոկտեմբերիկի» խմբագիրը և «Արու-Լալա Մահարիի» հեղինակը: Ի դեպ ասեն, որ մեր տնեցիք երկար ժամանակ զոհունակությամբ հիշում էին, որ Վարպետին ուղեգրեր էին հատկացրել մահան հայտնի առողջարանում: Ինչ իմանար Վարպետը, որ այդ նույն ժամանակ, Սոֆիյում, իրենից ստացված խորը տպավորության տակ, պիտի հանգստանային իր երիտա-

սարդ հայրենակիցները: Ասեմ մահ, որ այդ նույն ժամանակ Սոֆիյում՝ հանգստանում էին այնպիսի մեծ գրողներ, ինչպես Բորիս Պաստերնակը, Կոնստան-

տին Պաուստովսկին, Նիկոլայ Տիխոնովը և ուրիշներ:

Հատված Գրիգոր Մարտիրոսյանի «30 և բազում օրեր վարպետի հետ» գրքից



Ավ. Իսահակյանը հայ գրականության տասնօրյակի մասնակիցների հետ «Մոսկվա» հյուրանոցի ճեմասրահում: Նստած են, ձախից՝ Մ. Արազի, Ավ. Իսահակյան, Գ. Դեմիր՝յան, Գ. Սարյան: Կանգնած են՝ Մ. Մանվելյան, Հմ. Սիրա, Ստ. Չորյան, Հր. Գրիգորյան, Գ. Աբով, Գ. Բորյան:

Վարպետը ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Բարի հիշատակներից մեկը

«...Օտար հորիզոնների տակ ծնած, օտար աստղերու տակ հասակ առած, շատերու մահ, անանուն կարոտ մը, չարտահայտած սեր մը կայ, որ զիս կապել է Երևանին: Եվ հիմայ ես ալ կռվործեմ ըսել՝ Երևանն իմ քաղաքն է, իմ հայրենիքը, իմ հայրենիքի մայրաքաղաքն է, և տասնյակ տարիներ օտար մայրերու վրայ ջալել է յետոյ հիմա ես ալ կրնամ հին Երևանցիի նման սիրել, զուրգուրել, ուրախանալ, թախծել Երևանով: Երևանը իմ քաղաքն է, Հայոց մայրաքաղաքը, վաղուան մեծ երազի ձամբուն վրայ, լուսեղեն հանգրվան մը»:

Մեսրոպ արքեպիսկոպոս ԱՇՅԱՆ

Իրավունք ունի սրբազանը Երևանն իր հանգրվանը համարելու, քանզի կարճատև ապրելով Երևանում, բազում հիշատակներ թողեց, լիովին ապացուցելով իր սերը հայրենիքի ու նրա մայրաքաղաք Երևանի նկատմամբ, ծավալեց աստվածահաճ շռայլ եկեղեցական, կրթական, գիտական և հրատա-

րակչական գործունեություն: Հովանավոր ու աջակից եղավ բազմաթիվ հայազգիտական մեծարժեք աշխատությունների լույս ընծայմանը: Վերջինների թվին է պատկանում, 2003-ին «Մուղմի» հրատարակչության կողմից մեզ պարզևած երվանդ Շահազիզի «Հին Երևանը» խիստ շահեկան աշխատությունը:

1931-ին Մելքոնյան ֆոնդի կողմից հրատարակված այս աշխատությունը վերահրատարակվել է և այն իմ սեղանին է դրված:

Առաջին տպավորությունս այն է, որ սա ամենին նման չէ նախորդին, թեև՝ հիմնական բովանդակությամբ նույնն է: Երևան քաղաքի պատմության բանգարանի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Արմինե Սարգսյանի և բանգարանի աշխատակցուհի Լուսինե Ամիրջանյանի բազմաշխատ ջանքերով ծանրակշիռ ներդրում է կատարված նախկին հրատարակվածում, լրանակումներով ու ծանոթագրություններով հավելվել, հարյուրից ավելի խիստ արժեքավոր լուսանկարներով ու



Yervand Shahaziz

Old Yerevan

գծագրերով զարդարվել է գիրքը: Երկրորդ հրատարակությունը արդյունք է արժանահիշատակ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշյանի, նյութական հովանավորությամբ Ինդիանայի (ԱՄՆ) բնակիչների, դոկտոր Արամ և իր տիկին՝ Սեդա Սեմերձյանի: Գրքի հրատարակիչ Մեսրոպ սրբազանը գրքի առաջաբանում, որի մասն է կազմում հողվածիս բնաբանը, այս գրքի սկզբում անհրաժեշտ է գտել անգլերեն լեզվով

գետնղել Թադեոս Հակոբյանի «Երևանի պատմությունը» քառահատորից բաղկած աշխատությունը՝ հնագույն ժամանակներից մինչև 1917 թվականը (էջ 11-39), որպեսզի գիրքը մատչելի լինի նաև օտար ընթերցողներին:

Շնորհիվ վերը հիշատակված արժեքավոր մուծումների, Երվանդ Շահազիզի «Հին Երևանը» դարձել է առավել գնահատելի

գիտական շրջանառության մեջ: Կատարված լրամուծումները միայն նպաստել են հեղինակի բարձրարժեք շարադրանքի դյուրընկալմանը, այն էլ՝ առավել շրջանակներում:

Գրքի վերջում գետնղված են օգտագործված գրականության ընդարձակ ցուցակը (64 անուն), որանց ծանոթագրությունները և Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում հայտնաբերված Երվանդ Շահազիզի ինքնակենսագրությունը:

Որպես Երևանի քաղաքաշինական, զարգացման և ճարտարապետության պատմաբան, բարձր են գնահատում «Հին Երևանը» աշխատության վերահրատարակված տարբերակը և արարողներին խորին շնորհակալությունս են հայտնում:

«Հին Երևանը» աշխատության վերահրատարակումը, այն էլ հիշատակածս լրացումներով, հիշողություններով, հիշողություններով զուրկ է: Դրանով ևս մի բարի հիշատակ թողեց ազգանվեր մի հայորդի՝ վաղամեռիկ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշյանը, որը Հայաստանում սիրվեց ու գնահատվեց: Նա արժանի էր լինել պատվավոր Երևանցու կոչմանը պատկանող քաղաքացի:

Որտե՞ղ են հորս աշխատանքները

Նամակ՝ մեկնաբանությամբ

ՀՀ Գիտությունների Ակադեմիայի
Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտի
տնօրեն, ակադեմիկոս
Գ. ԶԱՅՈՒԿՅԱՆԻՆ

Պատճեն - ՀՀ Գիտությունների Ակադեմիայի
«Գիտություն» թերթի խմբագրությանը

Արագածոտնի մարզի Մելիք գյուղի բնակիչ
Էդուարդ Քերոբի ՄԱՂԱԹՅԱՆԻՑ

ԴԻՄՈՒՄ

Իմ հանգուցյալ հայրը՝ Արագածոտնի մարզի Մելիք գյուղի (նախկին Արագածի շրջանի) բնակիչ Քերոբ Մկրտիչի Մաղաթյանը 1987-1988 թթ. ընթացքում Լեզվի ինստիտուտին է հանձնել «Բարբառների բառարան», «Արևմտահայ խոսվածքները Ապարանի տարածքում» և «Լեզվի մեջ հնչյունային համակարգի դերի մասին» աշխատությունները, որոնց ձևակազմից մինչև օրս հայտնի չէ։

Խնդրվում է հայտնել նշված աշխատությունների հրատարակման աշխատանքները ի՞նչ ընթացքի մեջ են գտնվում և այդ առթիվ Լեզվի ինստիտուտի կողմից ի՞նչ որոշում է կայացվել։

Դիմող՝ Է. Ք. ՄԱՂԱԹՅԱՆ
8.09.2003 թ.

Սույն դիմումը ստացել ենք վաղուց՝ 2003 թվականի սեպտեմբերի 8-ին։ Այդ օրվանից սկսած խմբագրությունը հետաքրքրվել է տարբեր բաժիններում՝ պարզելու նշված հարգի ծակատագիրը։ Ամեն տեղ՝ ակադեմիայի լեզվի ինստիտուտում, «Գիտություն» հրատարակչությունում, համակարգչային բաժնում մեզ տվեցին նույն տեղեկատվությունը՝ «նման աշխատություն, իրոք, հիշում ենք, բայց հետագա ծակատագիրը չգիտենք»։ Մենք էլ պարզելու համար հետագա ծակատագիրը որոշեցինք գտնել որևէ գրառում, հաշվառում, գիտական աշխատությունը ինստիտուտ կամ հրատարակչություն հանձնելու որևէ գրառում։ Ավա՞ղ, ամեն տեղ նույն պատասխանը՝ հիշում ենք, բայց ինչ եղավ հետո՝ չգիտենք։ Ասում են այնպիսի հանգստությամբ, ասես խոսքը ոչ թե գիտական աշխատությունների, ամիսների, գուցե և տարիների տքնաջան աշխատանքի արդյունքի մասին է, այլ, ասենք, թերթի խմբագրությանը՝ մի միջոցառման մասին ինֆորմացիայի մասին, որը վաղեմությունը կորցնելուց հետո կարելի է և «կորցնել», քանզի այն այլևս ոչ ընթերցողին է պետք, ոչ էլ հեղինակին։

Մենք շա՛տ ենք հարգում մարդանց, ովքեր դեկավարում են այն բնագավառներն ու բաժինները, որոնցով անցել են տվյալ հեղինակի՝ մի քանի գրքերի հրատարակությունների հեղինակ Քերոբ Մաղաթյանի նշված աշխատությունները։ Բայց մենք նաև համոզված էինք, որ նման հարգալից վերաբարմունք ունեն և նրանք՝ հեղինակների, շարքային գիտնականների նկատմամբ։ Բայց նշված փաստը մեզ պարզապես վշտացնում է։ Ակադեմիան, նրա ինստիտուտները ոչ միայն ստեղծագործող գիտնականների հիմնարկներ են, այլև նման ներուժ կազմակերպող, գիտական ամեն մի միտք քաջալերող ու զարգացնող առաքելություն ունեն։ Ու մեզ վայել չէ գիտական որևէ ստեղծագործության մասին ասել. «Հա՛, ինչ որ բան հիշում ենք», «այդպիսի մի գործ կարծես ստացել ենք», «կարծես համակարգչային բաժնում պետք է լինի» ու նման բաներ։ Ու ոչ մի հաշվառում, ոչ մի գրառում։

Իսկ հեղինակի հարազատները պահանջում են պարզել՝ որտեղ են մեր հոր աշխատությունները, ինչ ծակատագրի արժանացան այս 15 տարիների ընթացքում։ Տվեք մեր ձեռագրերը։

Այ, այսպես...

Նորից Թուրիսյան մատուցի մասին


Վերջերս Իտալիայի Թուրին քաղաքի եկեղեցու մասնակի վերանորոգումների ժամանակ պատերից մեկի վրա, արտաքին շերտի տակ հայտնաբերվեց մի որմնանկար, որը ներկայացնում է Փրկչի դեմքը։

Ե՛րբ, ո՛ր դարում, ո՞վ է այս նկարի հեղինակը՝ հայտնի չէ։ Սակայն մի բան ստույգ է. այն շատ է հիշեցնում Թուրինյան նշանավոր մատուցի՝ Քրիստոսի պատանքի վրա դաշված-դրոշմված Աստծո որդու դիմագծերը։ Թուրինյան պատանքի մասին մեր թերթը ժամանակին պատմել է ընթերցողներին, մանրամասներ հրապարակել պատանքի կտավի հետազոտության, գործվածքի տարիքը հույժ ժամանակակից միջոցներով ճշտելու փորձերի մասին, որոնք հնարավորություն ընձեռեցին եզրակացնել, որ պատանքը Քրիստոսի խաչելության ժամանակվա և տեղի գործվածք է։

Իսկ ինչ վերաբերում է Փրկչի նորահայտ դիմանկարին, ապա բացառված չէ, որ անհայտ մի հեղինակ հենց պատանքի վրա դաշված Քրիստոսի պատկերի նմանությամբ էլ ստեղծել է ձեզ ներկայացվող դիմանկարը։



ԲԱՅԱԶԵՏԸ՝ ԱՐԱՐԱՏԻ ՄՏՈՐՈՏՈՒՄ



Հարգելի խմբագրություն.

Չե՛ր բերքի անցյալ տարիների համարներում հաճախ ենք տեսել պատմական Հայաստանում արված լուսանկարներ։ Դա մեզ միշտ հուզել ու հետաքրքրել է։ Հասկանալի զգացմունք... Վերջերս Մոսկվայի PTP հեռուստաալիքը մի քանի օր անընդմեջ ցուցադրում էր «Բայազետ» կինոնկարը՝ ռուս-թուրքական պատերազմի մի դրվագի մասին։ Պատմությունից գիտենք, թե ինչը՝ ինչպես վերջացավ։ Մեզ շատ հետաքրքրեց նկարահանումների վայրը՝ մի՞թե դա իրոք Բայազետն էր և նրա մոտ հոսող Բայազետ գետը։ Ինչպե՞ս են թուրքերը համաձայնվել թույլ տալ նկարահանել իրենց պատմության էջերից մեկը։

Մ. ԹԵՎՈՅԱՆ
Ուսանողուհի

Խմբագրության կողմից.

Հարգելի ընթերցող. նման հարցով մեզ էլի են դիմել։ Ներկայիս Բայազետը գտնվում է Արարատ լեռան հարավային ստորոտում և իրենից ներկայացնում է փոքր մի բնակավայր։ Սակայն ինչպես երևում է լուսանկարից, պահպանվել է հին քաղաքի պարսպապատ ամրոցը, որի ծախ կողմում մնացել է հայկական եկեղեցու մի մասը, իսկ աջում՝ թուրքական մինարետը։

«Բայազետ» կինոնկարի նկարահանումները կատարվել են ոչ պատմական Բայազետում, այլ սիրիական տարածքի ամրոցներից մեկում։ Ամրոցը, տեղանքը շատ նման են հին Բայազետին, այնպես որ կինոնկարի ստեղծողները ունեցել են լավ խորհրդատուներ՝ տեղանքն ընտրելու հարցում։ Բայազետը ցարական Ռուսաստանի ռազմական կարևորագույն ամրոցն էր և, բնականաբար, նրա պաշտպանությունը կապված էր ամբողջ Անդրկովկասի պաշտպանության հետ։ «Բայազետ» ժապավենով ռուս կինեմատոգրաֆիստները հաղթահարեցին սկզբունքային մի արգելք, այն է՝ անդրադառնալ, թե՞ ոչ Հայաստանի պատմության կարևոր էջերին, առանց վտանգելու ռուս-թուրքական հարաբերությունները։

ԴՆԱԿ-ԴՆԱԿ

Երկսեռ Ամերիկա

Ահա արդեն բանի տարի Միացյալ Նահանգներում ավելորդ մազածակույթի, մազակալության դեմ պայքարելու համար մասսայաբար օգտագործվում է USFUDH-ը քիմիական նյութը: Եվ ահա նոր-նոր պարզվել է, որ հենց այս նույն USFUDH-ը գործողին դարձնում է երկսեռ: Արու գործերի մոտ սկսում են աճել իգական սեռական օրգաններ:

Ատրագինը այսօր Միացյալ Նահանգներում համատարած է, ամեն տեղ: Եվ գիտնականները լրջորեն մտահոգված են. ամերիկացիներին չի՞ սպառնում երկսեռ դառնալու վտանգը:

Ինչ ասես, որ կատաղի

Հնդկաստանի բնակիչ Ռամա Սեխարդին դիմել է Կալկաթայի դատարան՝ թույլտվություն խնդրելով պաշտոնապես ամուսնանալ... շան հետ:

Բանն այն է, որ նրա վաղաժեռ կինը համոզված է եղել, որ մահվանից հետո, անդրշիրիմյան կյանքում ինքը դառնալու է շուն: Մի օր Ռաման փողոցում հանդիպում է մի շան, որի աչքերը շատ էին նման հանգուցյալ կնոջ աչքերին: Իսկ գուցե՞ իսկապես... Ահա և Ռամայի ամսվոր խնդրանքի պատճառը:

Ամերիկայի Միացյալ Նահանգների Էներգետիկայի նախարարությունը 100 միլիոն դոլար է հատկացրել «Էքստրեմոֆիլների» հետազոտության համար: Սրանք բակտերիաներ են, որոնք գոյանում են էքստրեմալ պայմաններում՝ շատ բարձր և շատ ցածր ջերմաստիճանների ժամանակ, թունավոր միջավայրում և այլն: Նախարարությանը հատկապես հետաքրքրում են այն բակտերիաները, որոնք կարողանում են «ապրել» ռադիոակտիվ միջավայրում:

Գիտնականները հույս ունեն «բուծել» այնպիսի բակտերիաներ, որոնք կկարողանան մաքրել ռադիոակտիվ ենթակած ջուրը և բայթայել ծանր մետաղները:



Իրաք. ամերիկացի «ազատարարներ»...

Սուտ ասելն ու խաբելը դառնում է անհնար

Գիտնականները ստեղծել են մի սարք, որի օգնությամբ ցանկացած «ստախոս» բռնվում է ու մերկացվում մի բանի թուլեաների ընթացքում:

Էլեկտրոդներով պատված և սաղավարտ հիշեցնող այս հարմարանքը աշխատում է մոտավորապես նույն սկզբունքով, ինչպես հայտնի «ստի դեղեկտորը»:

Արմատական մի տարրերություն կա սակայն. բռնվողին, փորձարկվողին ոչ մեկը ոչինչ չի հարցնում: «Հարցնում են» նրա ուղեղին, որը, ինչպես հայտնի է, խաբել չի կարողանում:

Բանն այն է, որ մինչև այժմ կիրառվող «դեղեկտորները» մարդու սուտ խոսելու կամ ճշմարտություն ասելու աստիճանը որոշում էին արտաքին պարագծերով՝ արյան ճնշան փոփոխություն, շնչառության հաճախականություն, քրտնարտադրություն և այլն, և այլն:

Օրինակ, գիտնականին հարցնում են՝ ինքը գո՞հ է իր ստացած աշխատավարձից: «Այո» պատասխանում է գիտնականը, միջոցառում նրա զարկերակը խփում է երկու անգամ արագ, իսկ սաղը քրտինքը պատում է նրան: Պրծավ,



բռնվեց, սուտ է ասել՝ արձանագրում է «դեղեկտորը»: Սակայն բազում օրինակներ կան, երբ մարդկանց, հատուկ պատրաստություն ունեցող մարդկի կարողացել են խաբել ամենագոր «դեղեկտորին»:

Երևի հենց սա է նոր սարքի ստեղծման անհրաժեշտությունը: Լորեն ֆարվելի պատրաստած սարքին խաբելն անհնար է: Սարքը արձանագրում է այն

էլեկտրական ազդանշանները, որոնք առաջանում են մարդու գլխուղեղում որպես այս կամ այն երևույթի արձագանք, և առաջանում են անկախ մեր կամքից ու ցանկությունից:

Սաղավարտը հազցնում են գլխից, և դու նայում ես դիմացի դրված էկրանին, որի վրա հարցեր են գրվում ուղղված թե՛: Բեզմից խոսել չեն պահանջում: Պարզապես ուղեղը ամփոփապես արձագանքում է գրվածին և էլեկտրական ազդանշանները արձանագրվում են սարքում:

Սակայն, ինչպես ասում են, սա վերջի սկիզբն է: Պարզվել է, որ մեր ուղեղը տարբեր կերպ է արձագանքում ծանոթ և անծանոթ դեմքերին: Այս հատկությունը կարելի է օգտագործել առերեսումների և ճանաչումների ժամանակ: Զե՛ որ, ինչ էլ որ պնդի բնողվող այդ պահին, նրա ուղեղը կասի միայն ու միայն ճշմարտությունը:

Այնպես որ, եթե սույն սարքը ստանա լայն կիրառություն, ապա բոլոր նրանք, ովքեր ապրում են ստով, կեղծիքով, դուրս կգան ջրի երես: Եթե... Եթե, իհարկե, դրանց մերկացնելու ցանկություն լինի:

ՆԱԽԱՆԻՆՆԵՐԻ ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ԱՄՎԵՐՆԵՐԸ

Նախնիների առեղծվածային ստվերները

Օրերս համաշխարհային տեղեկատվության միջոցները հաղորդեցին սենսացիոն նորություն: Գերմանիայի միջնադարյան բազավորական դղյակներից մեկում հույժ ժամանակակից սարքերի օգնությամբ հաջողվել է ժապավենի վրա ֆիքսել գիշերները ամայի շենքում շրջող անմուտքական ուղղակի գոյությունը: Գիտնականները, սակայն, դեռևս ոչ մի գիտական բացատրություն չունեն այս առեղծվածի բնույթի մասին:

Ասում են, որ ոչ մի տեղ այնաշխարհայինների ներկայությունը այնպես չի զգացվում, ինչպես Անգլիայի հին ու մոայլ դղյակ-ամրոցներում: Այդպիսիներից է Մոնկաստր հինավուրդ և հեքիաթային գեղեցկության ամրոցը: Այստեղ ինչևնամ հյուրերը գիշերները լսում էին լացի ծայն, սենյակը հանկարծ ահավոր ցրտում էր և այլ անհասկանալի երևույթներ:

Դղյակի տները որոշեցին դիմել մասնագետներին: Հյուրասենյակում և ննջարաններում դրեցին գերզգայուն սարքեր և սպասեցին գիշերվան: Ժամը 11-ի մոտ սարքերը արձանագրեցին ջերմաստիճանի կտրուկ նվազում: Բացվեցին փակվեցին դռները, լսվեց ոտնաձայն հիշեցնող թխթխոց: Գիտնականները առավոտյան խորհրդատու հառաչեցին և անգոր նայեցին իրար: Իհարկե, եզրակացությունը միանշանակ էր. դղյակում կա ինչ-որ բան, բայց ի՞նչ, իրենք անկարող են բացատրել:


Եթե Մոնկաստրի ուղղակականները այնքան էլ շատ չեն, ապա նույն Անգլիայի մեկ ուրիշ ամրոցում հեղված արյան հեղեղները գոյացրել են անթիվ ոգիներ: Խոսքը վերաբերում է Լոնդոնի նշանավոր Տաուերին՝ անգլիական թագավորների տիրապետության բանտին: Վկայում են, որ երկրորդ աշխարհամարտի տարիներին, երբ գերմանացիները ռմբակոծում էին Լոնդոնը, Տաուերի դարպասների մոտ հայտնվեց սահմանեցուցիչ մի տեսարան. պահակակետում կանգնած սերժանտ Գրեմ Ուոլշի աչքերի առջև բառսային աղմուկի, դղրդումների և անթափանց մառախուղի միջից հայտնվեցին 4 մարդ, ո-

րոնք ինչ որ բան էին տանում: Երբ նրանք շատ մոտեցան, սերժանտը արյունոտ սպանի տակ նշարեց մարդկային մարմնի կերպարանը: Այնուհետև թափորը գոլորշիացավ, ցնդեց, աներևութացավ օդում: Ինչպես հետո նկարագրեց սերժանտը, թափորի մարդկանց հագուստը ճշտորեն համընկնում էր 16-րդ դարի զինվորական սպաների համազգեստին: Իսկ թափորը ուղղվում էր դեպի այն մատուռը, որի բակում թաղում էին գլխատված մահապարտներին:

Կարծիք կա, որ ինչ-որ սարսափելի պահի՜ կապված մոտիկ մարդու մահվան կամ անասելի ցավի հետ, առաջանում է այնպիսի ուժի էնոցիոնալ էներգիա, որը հետագայում չի կորչում, պահպանվում է, որպեսզի մեզ՝ ապրողներս, ստվերկերպարանքներով կամ ծայներով հիշեցնի կյանքից հեռացածների մասին:

Անգլիացի Ջոն Միշլավը նավով Լիվերպուլից ճամփորդում էր Նյու-Յորք: Գիշերը նա երազ տեսավ, իբր նավախցիկի դուռը բացվեց, և ներս մտավ երկու տարի առաջ մահացած կինը. նա գիշերազգեստով էր: Մոտենալով Միշլավի անկողնում, նա թեքվեց, համբուրեց ամուսնուն և դանդաղ հեռացավ: Երբ Ջոնը առավոտյան զարթոցեց, շատ զարմացավ, որ նավախցիկի իր հարևանը ակնապիշ նայում է իրեն: Հետո Միշլավը լսեց հարևանի ծայնը. «Այ թե կնամուլն ես, հա, սիրելի բարեկամ: Այդ ինչ տաղանդ ունես, որ գիշերները գեղեցիկ կանայք այդ տեսքով այցելում են թե՛...»:

Որոշ գիտնականներ գտնում են, որ ուղղակականները բնակվում են մեզ զուգահեռ տիեզերքում՝ իրական և այնկողմյան աշխարհների միջև: Այդ տխուր ոգիները դատապարտված են հավերժ թափառելու մեղավոր երկրի վրա և... մեկ-մեկ էլ այցելության գալ ողջերին: Բացառված չէ, որ ինչ-որ տեղում, ինչ-որ ուղղակական հենց հիմա պատրաստվում է դուրս գալ գիշերային զբոսանքի, և մոլորակի ինչ-որ վայրում և ինչ-որ մեկին սպասում է անսպասելի, անհասկանալի հանդիպում ուղղակական կոչվող հանելուկային արարածի հետ...



«Մարսյան» լեռներ

Ալկոհոլի մասին

Շատ-շատ տարիներ առաջ մարդիկ հայտնաբերեցին, որ երբ տարբեր մրգերի հյութերը որոշ ժամանակ պահում են տաք միջավայրում, նրանց մեջ առաջանում է մի նյութ, որը հանելի և արբեցնող զգացում է պատճառում: Սակայն պարզվեց նաև, որ հանելի զգացողության հետ միասին որոշ մարդկանց համար ալկոհոլ դառնում է անհաղթահարելի պահանջ և սովորույթ: Ինչո՞ւ է այդպես:

Կենդանիների վրա փորձ կատարելով, դեռ 60 տարի առաջ կանադացի մի հոգեբան գտավ, որ ուղեղում գոյություն ունի այսպես կոչված «բավականության կենտրոն»: Բնականաբար, հարբեցողության ախտը բացատրվում է նրանով, որ մշտական պահանջ է զգացվում խթանել այդ կենտրոնը: Ավելի ուշ մարդկային օրգանիզմում հայտնաբերվեցին մորֆինանոն նյութեր՝ էնդորֆիններ: Ալկոհոլը խթանում է օրգանիզմում այդ նյութերի առաջացումը, և դրա համար էլ որոշ մարդկանց մոտ առաջանում է մշտական պահանջ ալկոհոլի նկատմամբ:

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Գյուղակաղենիայի պրոֆեսոր Լ. ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆԻ խոսքը.

«Իմ ուսանողական տարիներին Ա. Ռուսկյանը մեր անասնաբուծական ֆակուլտետի դեկանն էր և մեզ համար «Բոգ» էր՝ Աստված:

Երբ ավարտեցի ֆակուլտետը գերազանցությամբ, նա կանչեց ինձ և հորդորեց շարունակել ուսումնական առաքելությունը. գործնականորեն աջակցեց, նպաստեց գիտական խորհրդի կողմից «Երաշխավորագիր» ստանալուն:

Ա. Ռուսկյանը գիտության մեծ գիտակ էր, բազմակողմանի զարգացած անձ, հարգում էր իրեն նախորդած և իր ժամանակի գիտնականների՝ ակադեմիկոս Ալ. Թամաշևի, Մ. Իվանովի, Ե. Բոգդանովի գիտական դրույթները, սկզբունքները:

Տեղին է նկատել, որ նրա տաղանդը նրա բազմակողմանի և խորաթափանց հայեցողության մեջ էր: Նա անասնաբուծության սելեկցիոն-տոհմային գործի հաջողությունը տեսնում էր կերակրման գիտական (գիտության) թափանցումի, կազմակերպելու և իմացական ուժեղության (մակարդակի բարձրացման) մեջ. ահա այդ նույն նշանակությամբ նա նպաստեց անասնաբուծության գ/հ ինստիտուտում կերերի կենսաքիմիայի և գ.տ. կենդանիների կերակրման բաժինների (լաբորատորիաների) հիմնադրմանը, ուր օրավուր կատարվում էին հետազոտական ուսումնասիրություններ՝ ըստ տոհմային տնտեսությունների, դիսերտացիաների թեմատիկ պահանջարկի:

Ցավոք, վերջին տասը տարիների ընթացքում անասնաբուծական աշխատանքները դուրս են մնացել ինստիտուտի աշխատանքային առօրյայից և փաստորեն նշված լաբորատորիաները հանիրավի լուծարվել են: Ա. Ռուսկյանի մեծության գնահատանքը, հետնորդներին թողած պատգամներն այսօր պարտավորեցնում են վերականգնել հայկական անասնաբուծության գ/հ ինստիտուտի գործնական ստատուսը, որը լուրջ խնդիր է, և իշխանավորները դրան պետք է վերաբերվեն հավուր պատշաճի...»:

Գյուղ. ակադեմիայի պրոֆեսոր ԳԱՆՆԻԿ ԳԻՆՅԱՆԻ խոսքից

«Ակադեմիկոս Աշոտ Արամի Ռուսկյանը անասնաբուծության դպրոցի կարկառուն ներկայացուցիչներից է. նա օժտված էր սելեկցիոն գործի խորը ճանաչողությամբ: Այսինքն արտադրության մեջ իրագործած նրա հետազոտությունները անպայմանորեն հիմնավորվում էին տեսական ընդհանրացումներով. արտադրություն-տնտեսություն՝ ահա Ռուսկյանի գիտնականի գործունեության սկզբունքը, գործադրության չափանիշը...»

Նման կապակցվածության մեջ էր նա տեսնում և կազմակերպում անասնաբուծության շարժը՝ նոր ցեղերի ստեղծման բնապատկերը (արարումը):

պարզաբանելով կենդանիների տնտեսական օգտակար հատկանիշների ժառանգման օրինաչափությունները, հետերոգիսի և ինբրիդինգի երևույթների ի հայտ գալը:

Եվ այդպես, նրա ղեկավար



Ակադեմիկոս Աշոտ Ռուսկյան-100

ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԼԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՒ ՆԱԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ

րությանը կատարված ոչխարաբուծության արշավախմբային ուսումնասիրությունները տեսական մեկնաբանում գտան նրա «Հայկական ՍՍՀ ոչխարաբուծությունը և նրա որակական բարելավման ուղիները» մենագրության մեջ, որը հիմնարար աշխատություն է, ոչխարաբուծության ձեռնարկ:

Առհասարակ մեծ արժեք են ներկայացնում անասնաբուծության վերաբերյալ նրա 5 մենագրությունները և 3 դասագրքերը, որոնք գիտական խորը ընդհանրացումներ են, անասնաբուծության ուղեցիկ և դասավանդման ձեռնարկ բոլոր ժամանակների համար:

Մեծ տեսաբանի, մանկավարժի ջանքերով 70-ականներից ի վեր խորհրդային Միության գյուղատնտեսական ուսումնական հաստատությունների ընթացիկ ծրագրերում մտցվեց «Տոհմային գործը անասնաբուծության մեջ» առարկայի դասավանդումը (ուսուցումը), իսկ նրա «Տոհմային գործը անասնաբուծության մեջ» դասագիրքը դրվեց կիրառական շրջանառության մեջ՝ թե բուհերում և թե պրակտիկ անասնաբուծության մեջ:

Ես երիցս հպարտ եմ Ա. Ռուսկյանի հետնորդը, աշակերտը, ժամանակակիցը լինելուս համար...»:

Յիրավի դժվար է ընդգրկել ամփոփել ВАСХНИЛ-ի եզակի հայ ակադեմիկոս Աշոտ Արամի Ռուսկյանի անհատականությունը, գործունեությունը, որ լցված է հայ անասնաբուծության գիտականացման խնդրով, գյուղ. կենդանիների մթերատու հատկանիշները գենետիկ պատվաստումների միջոցով բարելավելու-կատարելագործելու և երկրի (մարդուն) տնտեսությանը բարիքների (մթերքների) առատությունը շնոր-

հեղու մտահոգություններով, հոգսերով... Այդ ամենն իրագործելու, ամբողջացնելու, տերը դառնալուն Աշոտ Ռուսկյանը տրվեց անմնացորդ... Ծառայեց, քայլեց մատ առ մատ, քայլ առ քայլ... Ժախսեց-կիրառեց ի վերուստ տրված մտավոր առատությունը, խելամիտ իմաստությունը, կազմակերպչական ուրույն նրբերանգը... և հաջողություններով լցրեց իր դարը՝ 20-րդ սկզբից մինչև ավարտը՝ ագրոնոմ մասնագետից կարգավելով ոսկե մեդալներով զարդարուն գիտնական (պրոֆեսոր, դոկտոր, ակադեմիկոս), անասնաբուծության տնտեսության հիմնադիր-ջատագով, մանկավարժ հայր, միշտ մնալով Մարդ-բարեկամ...

Այդ Մարդը՝ հայրդին, լավ գիտեր իր ժողովրդի պատմությունը. գիտեր Հայաստան

նաբուծության վերելք՝ զա՛րկ, շեփոր... Այսպես խլրտաց արյունը, ազգային զգացողությունը հայրդի Աշոտ Ռուսկյանի երակներում, էության մեջ... Եվ թեպետ նրա ներաշխարհը լի էր մշակութային նրբերանգ զգացողությամբ՝ Շոպեն, Լիստ, Բեթհովեն, Չայկովսկի ունկնդրելու, զգալու կարողությամբ, հայկական, ռուսական և առհասարակ արևմտաեվրոպական կերպարվեստի, գրականության և պոեզիայի գլուխգործոցներով սքանչանալու ներուժով, բայց և այնպես սթափ էր իր տարբերակումների մեջ, իր լեռնային սիրտ մեջ... Մեր լեռնաշխարհում նա փնտրում էր իրենը և ձգտում էր ստեղծել, կառուցել հայկական իր պանոն՝ գիտական անասնաբուծության խորունկ խճանկարը...

Ահա այդ էր Ա. Ռուսկյանի

անասնաբուծության տարբեր ճյուղերի ընդգրկումներով, տեղի ուներ կարգերի նկատելի աճ... ինստիտուտի բարոյական կերպարը բարձունքում էր... Սակայն...

1990-ականներին խորհրդային Միության փլուզումին հաջորդեց հայկական անասնաբուծության և կերպարտադրության գ/հ ինստիտուտի անկման առաջին փուլը. հախուռն կերպով տեղի տրվեց գլխաբանակի սեփականաշնորհմանը և ակամայից ցրվել եկավ, անտարբերության մատնելով տոհմային տնտեսությունները (մեծամասամբ դանակի տակ առնվեցին), օրինակելի ցեղերի գենոֆոնդը: Այնուհետև (երկրորդ փուլ), դեռևս մնացած ինստիտուտի «թափոնները» մեր առօրյայում մոդայիկ դարձած «կենտրոն» միավորներում պատրվակով միացվեց անասնաբուծության համալիր կառույցին, որը գործում է Նուբարաշեն համայնքում... 40 կմ շառավղային հեռավորության վրա անհնարին դարձավ ինստիտուտի գործունեության կազմակերպումը... Այդ արդեն ինստիտուտի փլուզումի երկրորդ փուլն էր. գույքի թալան, ջարդուփշուր և այլն...

Հայ անասնաբուծության զարգացման երախտավորները (նաև Ա. Ռուսկյանը) ազգային ակադեմիայի գիտության մեծերը, որոնք վստահաբար կողմնակից են եղել և անհրաժեշտ համարել ինստիտուտի լինելությունը, այսօր էլ ձայն են տալիս-կանչում հեռու հեռվից՝ այդ նույն իսկ խնդրի պահանջով...

Եվ այսօր Աշոտ Ռուսկյանի 100-ամյակը հետնորդներին համար հարմար (անհարժեշտ) պահ է... ինստիտուտը վերականգնելու պահանջատիրություն... որի համար անհրաժեշտ է մեր ղեկավար այրերի (այդ թվում նաև այստեղ ներկա ազգային ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Սարգսյանի) սրտացավությունը, վերին ողջամտությունը...

Փառք Աստծո, գիտական ուժեր դեռևս մենք ունենք, իսկ այդ գործի արժանավոր կազմակերպիչ պետք է ընտրել լավից լավի՝ փորձառու, գիտությամբ զինված գիտնականի, լավ կազմակերպչի, մի անհատի, որը հայրենասիրությունը գերազնահատում է շահից...

Ինստիտուտի գործող գիտնականներն անցած տարիների ընթացքում բազմիցս անդրադարձել են (գրավոր և բանավոր դիմումներով) հարցի կարգավորմանը, բայց սայլը կանգնած է...

Մինչդեռ ինստիտուտը հայ անասնաբուծական գիտության մեկդարյա շարադրանքն է, բազում երախտավորների գործունեության պատմությունը, գալիք սերունդների համար գործունեության հանրամատչելի հանրագիտարանը...

Այսօր այն, բացի պատմությունից, նաև ազգային անվտանգության խնդիր է, որը պետք է ստանա լինելիության թվե...

Մեղորդա ԽԱՉԱՏՐՅԱՆ
Գյուղ. գիտությունների
դոկտոր, լրագրող

ՀՈՂՎԱԾԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ
ՀՈՎԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ԱՌԻՆՑԻ
ԾԱՌՈՒԿՅԱՆ ՍՊԵՏՈՐԵՆ
ՈՌԶԱ ԾԱՌՈՒԿՅԱՆԸ

սկիզբը և մաքառումների մղիչ ուժը նրա տրուած դժվարին ճանապարհին...

Այսօրվա հորելյանական գեղեցիկ տոնի մեջ կարևորում են Ա. Ռուսկյանի անվան և փառապանծ ուղու հետ առնչված մի դրվագ:

1943 թ. ... Պատերազմական դժնգակ տարիներ... Այդ թվականի հոկտեմբերի 29-ին ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի հիմքի վրա հիմնադրվում է գիտությունների հայկական ազգային ակադեմիան՝ ակադավոր գիտնական Դովսեփ Օրբելու նախագահությամբ:

1944-ի սկզբին նորաստեղծ ազգային ակադեմիայի նախագահության սկզբնական միստերից մեկում որոշում է կայացվում Հայաստանի անասնաբուծական հեմակետային կայանի հիմքի (բազայի) վրա անասնաբուծության (անասնապահության) գիտահետազոտական ինստիտուտ հիմնելու և Աշոտ Ռուսկյանին վերջինիս տնօրեն նշանակելու մասին:

Շուրջ տասը տարի Ա. Ռուսկյանի ղեկավարությամբ ինստիտուտը գործեց հայրենի անասնաբուծության զարգացման գիտական վերելքի ուղիով: Հետագա տարիներին ակադեմիայի գիտականացման նվաճումները...

1960-85-ականներին (տնօրեն՝ պրոֆեսոր Վ. Ոսկանյան) խորհրդային Միության գյուղատնտեսական գիտության արեմայում ինստիտուտը ճանաչվեց եզակի՝ կատարելագործված ցեղերի ստացմամբ՝ գյուղ. կենդանիների (5 տեսակների հաշվով)... Դա գիտարտադրական, տեսաբանական գիտության, մեթոդական նվաճումների աննախադեպ աճ էր. ինստիտուտը փթթում էր գործնականորեն, մասնագիտացում և ա-




Լազերը բուժում է աչքը

Մեր թերթը առիթ ունեցել է պատմել ամերիկյան բժշկների փորձի մասին, որոնք ակնաբուժության մեջ լայնորեն օգտագործում են լազերը: Լույսային հզոր շիթը ուղղելով աչքի վնասված նյարդերին, լազերը կատարում է զոդման յուրահատուկ դեր, միացնելով աչքի նյարդերի վնասված, մուգնիսկ իրարից բաժանված մասերը: Լազերային ակնաբուժությունը մուտք է գործել և մեր համապետություն: Խնդիրն այն է, որ այդ միջոցը կարող է անընդհատ կատարելագործման, հատկապես նոր սարքավորումների, գործիքների ստեղծման ուղղությամբ: Կարևորն այն է, որ նման լազերային վիրահատությունը ոչ միայն արդյունավետ է, այլև անցավ և առանց անցանկալի հետևանքների:

Նորի՞ց համաճարակ...

Անցյալ տարվա ամռան տազնապներից հետո աշխարհը մի փոքր հանգստացել էր, կարծելով, թե հաղթահարված է ոչ տիպիկ բորբոքի համաճարակը: Բայց թվացյալ էր այդ անդորրը: Հեռագրական գործակալություններն ու հեռուստակայանները նորից տազնապեցին՝ Չինաստանում նորից գլուխ է բարձրացրել այդ անհայտ վարակիչը: Մինչև հիվանդանոցներում հայտնվում են առաջին հիվանդները, իսկ իշխանությունները հակահամաճարակային ծեռարկումներ են իրականացնում բնակավայրերում, գիտնականներն ու բժիշկները շարունակում են իրենց հետազոտությունները այդ մահացու հիվանդությունը արդյունավետ միջոցներով կանխելու, առավել ևս իսպառ վերացնելու ուղղությամբ:



Ո՞վ է հավատում հրաշքների

Դուք հավատո՞ւմ եք թռչող ափսեների, ուրվականների, ոգիների գոյությանը, թե վստահում եք միայն ու միայն գիտական ապացույցների: Շվեյցարիայի գիտնականները հաստատել են, որ մարդու հրաշքների հավատալու կամ չհավատալու հակումը կախված է օրգանիզմում ընթացող նյութափոխանակության հետ: Պարզվել է, որ հրաշքներին հավատալու ավելի մեծ հակում ունեն նրանք, որոնց գլխուղեղում ԴՊՊՄՍԻՆ անունով հատուկ նյութի պարունակությունը շատ բարձր է:


ԽԱՅՏԱԿՈՐԱՌՈՅԻՆՆԵՐ, ՎԱՐԿԱՑՆԵՐ, ԱՌԵՂԱՎԱՑՆԵՐ

Ժանտախտ... տիեզերքից

Կարծիք կա, որ երկրի վրա հայտնված որոշ վարակներ ունեն տիեզերական ծագում: Ի՞նչ է սա՝ այնուհետևայինների դավաբություն, թե՞ պատահականություն:

Երբ 1811 թվականին Մոսկվայի երկնքում կախվեց հրե պոչով գիսաստղը, տազնապած և մանավանդ շուտ խուճապի մատնվողները սկսեցին ողբալ «աշխարհի վերջի» մասին: Եվ իսկապես, շատ շուտով եկավ

Նապոլեոնը, իսկ հետո էլ՝ վառվեց Մոսկվան: Նույն 1811 թվականին նույն այդ գիսաստղը հայտնվեց Իսպանիայի երկնքում: Միայն թե պարզամիտ, կենսուրախ իսպանացիները որոշեցին, որ դա հաջողության նշան է: Չիրավի, այդ ամառ խաղողի անմախղեպ առատ բերք ստացվեց, և միջերկրածովյան ողջ բնակչությունը գինի էր խմում և քեֆ առնում:



Սենդվիչների «հայրը»...

Այսօրվա չափանիշներով նրան պետք էր անառակ մարդ՝ անվանել: Թքած ուներ բարձր հասարակության բարքերի վրա, բացահայտ ապրում էր սիրուհու հետ: Նրա տունը, որ լի էր հնդկաստանից բերված շներով ու թութակներով, միաժամանակ և՛ շնանոց էր ինչեցնում և՛ ջունգլի:

Երեք անգամ Անգլիայի թագավորը կոմս Ջոն Սենդվիչին նշանակեց կայսրության ծովակալության Առաջին լորդ, սակայն պառլամենտը ամեն անգամ խայտառակ ձևով հեռացրեց նրան «տաքուկ» պաշտոնից: Պառլամենտը գտնում էր, որ կոմսը ոչինչ չի հասկանում ծովային գործից, սակայն իրականում նա տաղանդավոր մարդ էր և մտածողությամբ անգամ առաջ էր անցել իր ժամանակից:

Վերջին անգամ նրան հեռացրին այն բանի համար, որ ծովակալության փողերը վատնել էր երկաթից պատրաստված նավեր ստեղծելու մշուշապատ փորձերի և ինչ-որ Կուկի հեռավոր նավարկությունների ուղարկելու համար: Մեկ տարի անց Կուկի արշավախումբը հայտնագործեց Ավստրալիան, սակայն դափնիներին տիրացավ պաշտոնական արված կոմսին փոխարինողը:

Սակայն այնուամենայն, որ կոմս Ջոն Սենդվիչի գլխավոր թուլությունը եղել է թղթախաղը: Մի անգամ նա նստեց սեղանի մոտ և խաղաց մի քանի օր շարունակ, առանց ընդմիջումների: Ճաշելու ժամանակ չկար: Նա ծառային հրամայեց կտրտած հաց բերել և հորթի սառը միս: Ապա կոմսը մսի կտորը դրեց երկու հացի կտորների միջև և սկսեց ուտել: Մատներով, առանց դանակ-պատառաքաղի՝ պատառը տանելով բերանը:

Եվ ծագեց «Սենդվիչ» անվանումը: Շատ շուտով, այսինքն 18-րդ դարի կեսերին, խոհարարական սույն նորությամբ տարածվեց Մեծ Բրիտանիայի բարձրաստիճան ընտրանու տներում: Պարզ և անպաճույճ ուտելիքը ոչ միայն դարձավ արիստոկրատիայի մոդայիկ և սիրված սնունդը, այլև տարածվեց ամբողջ աշխարհում:

Խելացի ծաղիկներ

Եղիներուգի համալսարանի գիտնականները ապացուցել են, որ բույսերը ունեն առանձնահատուկ տեսակի ինտելեկտ: Բույսերը ընդունակ են ընդունել և վերլուծել ստացված տեղեկատվությունը: Ծաղիկներն, օրինակ, հիշում են, թե իրենց հետ ինչ է տեղի ունեցել ոչ վաղ անցյալում: Կա միայն մեկ «սակայն»: Այսպիսի արտասովոր ընդունակություններով օժտված են միայն ու միայն վայրի բույսերը:

Երկար ժամանակ մարդիկ մտածում էին, որ գիսաստղերը ունեն երկրային ծագում, թե իբր երկրային գոլորշիները բարձրանում են վեր և շփվելով մթնոլորտի հետ, վերածվում են ինչ-որ շերտփուկանման, հրե պոչով արարածների: Եվ միայն 16-րդ դարում գիտնական Տիխո Բրազեն կարողացավ կոտրել, որ գիսաստղը մթնոլորտային երևույթ չէ, այլ տիեզերական մարմին:

Գիսաստղերով մարդիկ սկսեցին ավելի լուրջ զբաղվել 1910 թվականից հետո, երբ տիեզերական հերթական հյուրին հաջողվեց լուսանկարել: Եվ չնայած ուսումնասիրությունների արդյունքում հավաքված իսկական գիտելիքներին, մարդկությունը դեռևս չի պարզել, թե որտեղից են հայտնվում գիսաստղերը: Այդ առեղծվածի կապակցությամբ գոյություն ունի մոտ 50 վարկած, սակայն դրանցից և ոչ մեկը լիարժեք պատասխան չի տալիս բոլոր հարցերին:


Ոչ շատ վաղուց գիտնականները մի հետաքրքիր հետազոտություն կատարեցին՝ համադրելով հին ժամանակներում երկրի երկնականարում գիսաստղերի հայտնվելու և նույն ժամանակ երկրի մարդկանց պատուհասած աղետալի համաճարակների փաստերը: Այս զուգահեռները ցնցող տպավորություն գործեցին գիտական աշխարհում, շփոթված էին նույնիսկ արեփստ-աստղագետները:

Գիսաստղերը և համաճարակները երկիր մոլորակ են եկել խիստ և կանոնավոր հերթականությամբ: Նախ երկնքում հայտնվել է հրե պոչով գլուխ-շերտփուկը, իսկ մի քանի տարի անց երկրի վրա մուգնեցել է սարսափելի համաճարակը, կամ մարդիկ սկսել են ախտահարվել մինչև այդ անհայտ հիվանդությամբ:

Այս եզրահանգումների արդյունքում առաջ քաշվեց ևս մի նոր վարկած՝ գիսաստղերը վարակի հարուցիչներ են տարածում ողջ տիեզերքում:

Ինչո՞ւ են տարածվում այս հարուցիչները, ո՞ւմ կողմից, ի՞նչ է սա՝ բնական երևույթ է, թե՞ ինչ որ մեկի կամքը: Եվ եթե դա հիրավի ինչ որ մեկի կամքն է, ապա բարի՞ է այն, թե՞ չար: Չէ՞ որ հարուցիչները կարող են լինել ինչպես ամեն կենդանականի կործանող, այնպես էլ հակառակը՝ նոր կյանքի սկզբնավորող: Գուցե գիսաստղերը վիթխարի սպերմատոզոիդներ են՝ ուղարկված փնտրելու ծվաբեջի, որը պիտանի է մոլորակի կյանքի համար:

Վերջերս Միացյալ Նահանգներում գումարվեց գիտաժողով՝ «Կա՞ր արդյոք կապ գիսաստղերի և այնուհետևայինների միջև» թեմայով: Այդ կապի մասին առայժմ հիմնավոր ապացույցներ չկան... գոնե առայժմ:



Չինական իշխանությունները կոչ են արել բնակչությանը ամեն օր ընդմիջման ժամին զբաղվել մարզանքով, առավել ևս՝ ներշնչանքի ուղեկցությամբ, որպես մարմնի դիմադրողականությունը բարձրացնող միջոց: Այդ միջոցառումը ոչ տիպիկ տենդի դեմ պայքարի միջոցառումների մի օղակն է:

Շախմատը և մաթեմատիկան

Շախմատը և մաթեմատիկան ընդհանուր շատ բան ունեն:

Շախմատիստի և մաթեմատիկոսի մտածելաձևերը բավականին մոտ են և պատահական չէ, որ մաթեմատիկական հատկություններով օժտված անձանց ավելի է հատուկ շախմատը:

Բավական է հիշել շախմատի աշխարհի չեմպիոնների անունները:

Մաթեմատիկայով հետաքրքրվում էր աշխարհի առաջին չեմպիոն Վ. Ստեյնիցը, հայտնի մաթեմատիկոս էր նրան հաջորդող Է. Լասկերը:

Միջազգային շախմատային ֆեդերացիայի (FIDE) նախկին պրեզիդենտ Մ. Էյվեն դեկավարում էր Զոլանդիայի հաշվողական կենտրոնը: Աշխարհի առաջին խորհրդային չեմպիոն Մ. Բոտվիննիկը տեխնիկական գիտությունների դոկտոր էր, երկար տարիներ զբաղվում էր շախմատային խաղի էլեկտրոնային ավտոմատ ստեղծելով վրա: Մաթեմատիկական ընդունակություններով էին օժտված Մ. Տալը և Ա. Կարպովը, բայց համուն շախմատի նրանք ստիպված էին «զոհաբերել» մաթեմատիկան:

Կան բազմաթիվ մաթեմատիկական գիտական աշխատություններ և հետազոտություններ ոչ միայն շախմատային խաղի տեսության, այլև շախմատային խաղատախտակի թվային գաղտնիքների, նրա շարժվող խաղաքարերի տարբեր բազմազանությունների մասին:

Այդ բնագավառում հայտնի աշխատություններից ամենամանրակիցը, թերևս ուսումնասիրելի և գրականագետ Կ. Յանիշի (1813-1872 թթ.) եռահատոր գիտական աշխատությունն է (1862 թ.) գրված ֆրանսերեն, նվիրված շախմատային խաղի մաթեմատիկական տեսությանը:

Դեղինակը հետազոտում է շախմատային խաղատախտակի վրա հնարավոր կոմբինացիաների թիվը, տարբեր խաղաքարերի դասավորությունը, նրանց արժեքները առանձին դիրքերում, փոխանակումներում և այլն:

Այդ առթիվ, արտասահմանյան հեղինակներից հիշարժան է նշել Բելգիացի մասնագետ Մ. Կրայնիկին, որի աշխատություններում հատկապես «Մաթեմատիկական խաղեր և զվարճալիքներ» գրքում մեծ ուշադրություն է հատկացված հետաքրքիր թվային տվյալների, շախմատային խաղատախտակին թագուհու դասավորություններին:

րի և ծիու խնդիրների վրա:

Այն հարցը, թե ինչպես մի մեթոդ, որ ծին քայլի խաղատախտակի բոլոր դաշտերի վրայով, չկանգնելով ոչ մի դաշտի վրա երկրորդ անգամ, մաթեմատիկոսների ուշադրությանն է արժանացել երկու հարյուրամյակ:

Առաջինը, որը մանրամասնորեն ուսումնասիրել է շախմատի ծիու քայլերը, եղել է շվեյցարական մեծ մաթեմատիկոս Լեոնարդ Էյլերը: Նախանջյալ հարյուրամյակի երկրորդ կեսում Էյլերը հրատարակեց մի աշխատություն, որում վեր է լուծվում ծիու քայլերը այսպես կոչված փակ ցիկլով, երբ վերջին քայլից հետո կարելի է վերադառնալ ելման կետը, փակելով գիծը, նշվող շախմատային խաղաքարի քայլով:

Այդ ժամանակվանից ծիու յուրատեսակ խնդիրները շախմատում կոչվում են Էյլերի պրոբլեմներ:

Զիու խնդիրների համար, տարբեր հնարավորությունների լուծումները նշանակալիորեն ավելի շատ են, քան այն թվում է, 64 վանդականոց խաղատախտակի վրա ծիու քայլերի հնարավոր տարբերակները գերազանցում են 31 միլիոնից:

Բոլորովին պարտադիր չէ լինել շախմատիստ, որպեսզի իմանալ, թե որ շախմատային խաղաքարն է ամենազարմանալին: Դա իհարկե ծին է:

Եվ պատահական չէ, որ «ծիու քայլով» այս ձևավոր արտահայտությունը հաստատվածներն մուտք է գործել մեր կենցաղը: Իսկ սրամիտ գրոսմայստերներից մեկը, ֆրանսիացի Ս. Տարտակովերը ողջակի ասում էր՝

«Շախմատի ողջ պարտիան դա ծիու մեկ թողարկված քայլն է»:

Զիու հիմնական տարբերիչ հատկությունն այն է, որ նա յուրաքանչյուր քայլում փոխում է իր դաշտի գույնը:

Զիու շատ խնդիրները էֆեկտիվ լուծում են ստանում օգտվելով նրա այս կարևոր հատկությունից: Օրինակ կարող է արդյոք, ծին 01 դաշտից հասնել հ8 դաշտ, լինելով ամեն դաշտի վրա մեկ անգամ: Պարզվում է դա անհնարին է, 01 ելման դաշտը սև գույնի է, որ նշանակում է, որ յուրաքանչյուր գույն քայլի դեպքում ծին կանգնում է սպիտակ դաշտի վրա: 63 թիվը (այդ, միայն այդ քայլից ծին կարող է գնալ հ8 դաշտը) կենտ է, սև գույնի, սև գույնի է նաև հ8 դաշտը:

Արեգ ԳՐԻԳՐՅԱՆ
Սպորտի վարպետ

Մամոնտը հարություն է առնում

Ռուսաստանի Դաշնության կենսաբանները հույս ունեն հարություն տալ մի մամոնտի: Անշուշտ, կլոնացման եղանակով: Կլոնացման նյութ է ծառայելու այդ բրածո կենդանու պահպանված DНК-ն: Յակուտսկ քաղաքից ոչ հեռու հավերժական սառույցների մեջ գտնվող մամոնտի ոտքից վերցրած DНК-ն պետք է տեղավորվի հնդկական մայր փղի ծվաբջի մեջ: Սիա գիտնականների օրագիրը: Սույն մայրացուն էլ իր արգանդում պիտի ծնվի որդի ապագա մամոնտի ծագին:

Իհարկե, այս օրագիրը այնքան էլ դյուրին չէ, սակայն նաև՝ ոչ անհրաժեշտ: Միջտեսակային (երբ պտուղը և «խորթ» մայրը պատկանում են կենսաբանական տարբեր տեսակների) կլոնացման փորձեր եղել են նաև առաջնորդ: Օրինակ, 2001 թվականին ռուսացի ամերիկացի անհրաժեշտ վայրի ոչխարի գաղմուկ: Ըստ որում, ժառանգական նյութը նույնպես վերցվել էր արդեն մահացած ոչխարի բջիջներից: Այդ գաղմուկը, այսօր արդեն հասուն և առողջ ոչխար է:



Հրաշյա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՆՐԱՀՈՒԹՅՈՒՆ

Ես ընկել եմ պազուտ Շամիրամի նետից, Հին Հռոմն է զարկել ինձ մահացու խոցով, Իմ արյունն են օրել, խառնել Տոմոս գետին, Իմ լեզուն են այրել ատրուշանի բոցով:


Խաչ են դաջել կրծքիս մի բարբարոս գեներով, Արաբական ծիու սմբակի տակ գցել, Ինձ խաբույկ են հանել մոնղոլների ձեռքով, Սիրտս օսմանական սլիններին ցցել:

Ինձ հայրենի իմ տան թխկենուց են կախել, Եվ հոգիս են բանտել շղթաներով երկաթ, Ինձ զարկել են, խարկել ու կենդանի թաղել... Բայց ես դեռ կան:

ՄԵՐԱՎՈՐԸ ԱՌԱՏ ԶՅՈՒՆ Է, ԹԵ՛...

Անելանելի վիճակ

Վերջին շրջանում մեծացել է հետաքրքրությունը տիեզերական մարմինների նկատմամբ: Շատ տեղերում հայտնաբերվել են սրածայր, սառցապատ լեռնաշղթաներ: Երևանցիները ոչ միայն հետաքրքրվում են այդ թեմաներով, այլև ամեն օր անմիջապես շփվում են այդ լեռների հետ: Այո, կոահեցից, խոսքը մեր փողոցների մասին է: Առատ ծյունը վաղ առավոտից սառցախառն առվակների է վերածվում կամ կուտակվում է մայրաքաղաքին: Դեռ օդային են երթուղայիններն ու հասարակական տրանսպորտի այլ մեքենայացուցիչները, կուտակված ծյունն ու սառույցը ակոսում են, դարձնելով անհաղթահարելի պատնեշներ: Գիշերային սառնամանիքները այդ խոնավ ծյունը վերածում են սառցե արգելքների, որոնք հաղթահարելու համար մարդիկ ոչ թե քայլում, այլ ցատկոտում են: Գիշտ այնպես, ինչպես ցատկոտում էր ամերիկյան լուսնագնացը, մեր սոսակա հարևանի՝ Լուսնի վրա: Դե՛ ինչ. «Կարելի է այժմվանից պատրաստվել, ինչ իմանաս, գուցե մեր սեյսմոլոգ ստիպված լինի նորմալ կենսապայմաններ փնտրել այլ մոլորակների վրա: Բայց եթե իսկապես մեզ հետ այդ մոլորակներ գաղթեն և մեր քաղաքի մաքրող, կարգի բերող կառույցների աշխատողները: Ել ինչ իմաստ ունի այդքան հեռու ճամփա գնալ, միևնույն է, այնտեղ էլ չենք կարողանա հաղթահարել այդ մոլորակների արգելքները: Այս ինչ անելանելի վիճակ է...



ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ, ԲԱԺԻՆՆԵՐԻ ԴԵՎԱՎԱՐՆԵՐԻՆ.

ՀՀ ԳԱԱ նախագահության միջոցառումների շնորհիվ «Գիտություն» թերթը 2004 թվականին կիրառական կանոնավոր: Մակայն այս հարցի լուծումը կախված է ձեզանից, եթե Դուք բաժանորդագրվեք թերթին: Մեկ տարվա բաժնեգինն է 2400 դրամ: Շնորհակալ կլինեմք, եթե դուք բաժանորդագրվեք 20 օրինակ և բաժնեգինը կանխիկ վճարեք խմբագրությանը կամ փոխանցեք հետևյալ հասցեով՝ Ջարգացման հայկական բանկ, հաշիվ՝ 18100-52001573345, «Գիտություն» թերթի խմբագրություն:

«Գիտություն» թերթի խմբագրություն

ԱՆՆԱԿՆԵՐ, ԵՐԱՆԵՐ

ԿՈՒԽԵՅ...

Հոռմի կենտրոնն է սա ու նա՛ կենտրոնական հուշարձանը: Եմանուել դի Վիտորիոյի պալատի մոտից ուղիղ ծառուղին քեզ կտանի անտիկ աշխարհի ամենահին ու նա՛ ամենապահպանված ամֆիթատրոնը՝ կոլիզեյը: Լատինական կոլիսեո բառից է այն, այսինքն՝ հսկա, մեծ: Այս շինության արեմայում կոճվել են գլադիատորները, այստեղ ինձ Հոռմի կայսրերը հերթական արշավանքից հետո նշել են իրենց հաղթանակը, այստեղ պատժել են անհնազանդ ստրուկներին: Այս շենքը, նույն ինքը՝ Հոռմի պատմությունն է, նրա հպարտությունն ու հմայքը, ցավն ու կորուստը:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վլադիմիր ՍՈՒՐԱՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24դ, հեռախոս՝ 56-80-14:

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 29.01.2004թ.

"ГИТЮТЮН" ("Hayka") gazeta HAH PA

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» թերթը հրատարակվում է հովանավորչական միջոցներով: